ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պարոն Դավիթ Խուդաթյանին
Երևան համայնքի բնակիչ
Վահրամ Ասատրյանից

Դիմում

Հարգելի պարոն Խուդաթյան,

Ձեզ եմ ներկայացնում իմ հասարակական գործունեության հիմնական ուղղություններն ու ձեռքբերումները՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարությանը կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար.

- Իմ նախաձեռնությամբ և համապատասխան դիմումների հիման վրա ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում Երևանի համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում ներառվել են Ֆիզիկայի ինստիտուտի տարածքը, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական գյուղի «Արագած» և «Անտառուտ» բնակավայրերի Նոր Համբերդ գիտահետազոտական կայանները: Այս գործընթացում իմ դերակատարումն արտահայտվել է վաղեմի գիտական և մշակութային արժեքների ճանաչման, պաշտպանության և պահպանության ուղղությամբ հետևողական աշխատանքի միջոցով՝ նպատակ ունենալով նպաստել ազգային գիտատեխնիկական ժառանգության արժևորումն ու հանրայնացումը:
- Երևանի քաղաքապետի 2023 թվականի նոյեմբերի N 3637-Ա որոշմամբ երկու տարի ժամկետով ընդգրկվել եմ Երևանի քաղաքապետին կից Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմում՝ մասնակցելով համայնքային ռազմավարական առաջնահերթությունների ձևավորման և տնտեսական պլանավորման գործընթացներին:
- Իմ նախաձեռնությամբ, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում Կոտայքի մարզպետի աջակցությամբ և հետևողական աշխատանքով, ապահովվել է Կոտայքի մարզի Քասախ համայնքի և Երևան համայնքի Դավթաշեն վարչական շրջանի բնակիչների համար դեպի համայնք տանող ճանապարհի ասֆալտապատումը՝ լուծելով երկար տարիներ առկա ենթակառուցվածքային խնդիրը:

- Իմ նախաձեռնությամբ և Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Շողակն բնակավայրի բնակչության աջակցությամբ կազմվել և ՀՀ Վարչապետին է ուղղվել դիմում՝ պարենային անվտանգության ապահովմանն առնչվող մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ: Դիմումն ընդգրկում էր ճանապարհի ասֆալտապատման, Երնջատափ, Շողակն խմելու ջրագծի վերակառուցման, ինչպես նաև ոռոգման ջրի համակարգի կառավարման բարելավման հարցերը: Դիմումը ներկայացվել է Շողակն բնակավայրի բնակչության շուրջ 80 տոկոսի ստորագրությամբ, ինչի արդյունքում բարձրացված առաջին երկու հարցերը ստացել են գործուն լուծում:

Վերոգրյալը համախմբում է իմ հասարակական գործունեության հիմնական ուղղությունները ու ձեռքբերումները, որոնք միտված են համայնքների զարգացմանը, ենթակառուցվածքային խնդիրների լուծմանը, պատմամշակութային և գիտատեխնիկական ժառանգության պահպանությանը, ինչպես նաև պարենային անվտանգության և բնակչության կենսապայմանների բարելավմանը: Հաշվի առնելով նշված փորձը և իրականացված նախաձեռնությունները՝ դիմում եմ ընդգրկվելու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարությանը կից հասարակական խորհրդի կազմում՝ շարունակելու և առավել լայն շրջանակում ներդրում ունենալու պետական քաղաքականությունների մշակման, համայնքային զարգացման ու հանրային շահի առաջմղման գործում:

Հարգանքով,

Վահրամ Ասատրյան

09.12.2025